

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անցեալ համարում մենք միայն արձանագրեցինք Ֆրանսիական և իտալական մինիստրութիւնների փոփոխութիւնը: Ժամանակը մեզ չի ներում երկարօրէն ընդարձակել այդ մինիստրական փոփոխութիւնների մասին, բայց անհրաժեշտ ենք համարում այդ անցքերի կարեւորութեան մի քանի դժերը շեշտել այստեղ:

Կաղիմիր Պերիէ'ի մինիստրութիւնը ամբողջապէս կազմած է չափաւոր հանրապետականներից, այնպէս որ արմատականներ չկան բնաւ ինչ: Կաղիմիր Պերիէ'ի անունը մէկն է Ֆրարսիայի ամենապատկառելի անուններից և ինքը անձամբ վայելում է բաւականին մեծ հեղինակութիւն: Ընդհանուրի ուշադրութիւնը գրաւում է լուսաւորութեան մինիստր Սպիւլլէր, որ յայտնի է իւր համակրութիւններով դէպի Սիզլիան և հակակրութիւնով Ռուսիային, և երևի հէնց այդ հանգամանքին պէտք է վերագրել այն, որ նա չաջողութիւն չունեցաւ մինիստրութիւն կազմելու և կամ արտաքին գործերի մինիստր նշանակելու:

Բայց իւր ներքին նշանակութեամբ աւելի կարեւոր է մինիստրական փոփոխութիւնը Խալիլայում: Հաղիւ թէ կարելի էր մի երկու ամիս առաջ նախատեսնել թէ Կրիսպին պիտի կոչւէր նոր մինիստրութիւն կազմելու: Սորանով երրորդ անգամն է որ Կրիսպին գլուխ է կանգնում իտալական մինիստրութեան: Կրիսպին անսունը անկասկած ամենամեծ անունն է Խալիլայի քաղաքական անձերի մէջ, միակ անձը, որ կարող է գործերի գլուխ կանգնել քաղաքական դժուարագոյն թոյլէներում: Եւ ծանրագոյն է այժմ Խալիլայի դրութիւնը: Խալիական բանկերում կատարած մեծամեծ զեղծումների մեղաքումը խաչառակեց քաղմաթիւ քաղաքական գործիչներին, և վերջին՝ Զիոլիտտի մինիստրութիւնն էլ այդ պատճառով ընկաւ: Երկրի տնտեսական դրութիւնը շատ աննախանձելի դրութեան մէջ է, պետական բիւջէն մեծ բացեր է թողնում, նոր հարկեր նշանակելը թուում է անհնարին, Սիցիլիայում բռնկել է ապստամբութիւնը, որի հետեւանքները այժմեանից նախատեսնել չի կարելի: Այս դրութիւնը մի

մեծ մասով յառաջացրած է Խոտալիայի արտաքին քաղաքականութիւնով: Յայտնի է որ Խոտալիան դաշնակից է Գերմանիային և Աւստրո-Ունգարիային: Այդ դաշնակցութիւնը կապւեց ոչ Կրիստիի նախկին մինիստրութեան օրերով, բայց Կրիստիին, դառնալով մինիստր-նախագահ 1877 թւականին՝ եղաւ այդ դաշնակցութեան ոգին և այնքան բուռն եռանդով կալաւ այդ դործին, որ ուզեց դրութէ ամեն կապ կտրել Ֆրանսիայի հետ, իւր մէջքին զգալով Բիսմարկի պէս մեծ դաշնակից, որի հետ նա ամենասերտ բարեկամութիւն էր պահպանում: Այդ քաղաքականութիւնը տարաւ հասցրեց այն բանին, որ Խոտալիան մաքսային կռիւ բացեց Ֆրանսիայի դէմ, որը ստիպեց նոյնով պառասխանել Խոտալիային: Կրիստիին կարծում էր որ իտալական արտահանութեան համար շուկաներ կը բացւեն Գերմանիայում և Աւստրո-Ունգարիայում և որ առհասարակ Խոտալիային կը յաջողի փոխարինել Ֆրանսիան՝ իւր նոր դաշնակիցներով: Եւ Կրիստիին սխալեց չարաչար: Խոտալիան արժէթղթերի մեծագոյն մասը Ֆրանսիայումէն են զետեղւած, արտահանութեան համար էլ Ֆրանսիան Խոտալիայի համար ամենամեծ շուկան էր և մնում է ցայսօր: Մաքսային կռիւը հասցրեց Խոտալիային սնանկութիւնների և տնտեսական տագնապի, իսկ զօրքերի աւելացնելը աւելացրեց պետական ծախքերը ոչ յօգուտ Խոտալիայի: Այսպիսով Կրիստիին այժմ կոչւում է կառավարութեան զլուխ՝ հնձելու համար իրասերմածը կամ դրստելու համար իւր անցած սխալները: Դրութիւններն էլ փոխւած են. այժմ Կրիստիին այլ ևս չի գտնում իւր բարեկամ Բիսմարկին Գերմանիայի կանցլէրի պաշտօնի մէջ, իսկ միւս կողմից Ֆրանսիան այն առանձնացած պետութիւնը չէ, որի մէջ էր նա տարիներ առաջ. Ֆրանսիան, շնորհիւ ռուսական դաշնակցութեան, Խուլիի ահուկի է դառել Խոտալիայի համար:

Երկրի ֆինանսները կանոնաւորելու խնդիրը՝ Կրիստիի ամենաառաջին հոգսն է կազմելու: Այդ հնարաւոր է միայն զօրքը պակսեցնելով: Մեծ քաջութիւն է հարկաւոր զօրքի պակսեցնելը զլուխ բերել: Բայց այս ևս հաստատ է որ եթէ, կայ Խոտալիայում մէկը, որ այդպիսի մի քաջութիւն կարող է գործել առանց վախենալու — դա Կրիստիին է: